
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԼԵԶՈՒ ՄԱՍՈՒԼԸ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԻ ԿԱՅՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ (1878-1896)

ԵՐԱՆՈՍՅԱՆ Ն. Ս.

Արևմտյան Հայաստանը և արևմտահայությունը Եգիպտոսի արաբալեզու մամուլը մտահոգող խնդիրներից են եղել: Հատկապես շատ են անդրադարձները Հայկական հարցին, հայերի կոտորածներին, մեծ տերությունների քաղաքականությանը Հայկական հարցում: Մի շարք հրապարակումներ, որոնք ստվարաթիվ չեն և առավելապես նկարագրական բնույթ ունեն, կարևորվում են այն տեսանկյունից, որ թույլ են տալիս վերհանել Եգիպտոսի արաբալեզու մամուլի էջերում հայերին և Արևմտյան Հայաստանին տրված գնահատականները: Այդ գնահատականների համագումարում է եգիպտական հասարակությունը քննության վերցրել արևմտահայությանն առնչվող հիմնախնդիրները:

Ընտրված ժամանակաշրջանի հրապարակումներում եգիպտական պարբերականները շեշտադրել են հատկապես հայի քաղաքակրթական դերը: Լուսաբանել են նաև արևմտահայությանն առնչվող այն հիմնախնդիրները, որոնք արտացոլում էին օսմանյան կառավարության վարած հայահալած քաղաքականության դրսևորումները և հող էին նախապատրաստում հայերի նկատմամբ ցեղասպանական ծրագրի իրագործման համար:

Այդ ժամանակահատվածում առավելապես չեզոք համարվող «Ալ-Ահրամը»¹ (Բուրգեր), որի ծնունդը գրեթե համընկնում է Հայկական հարցի միջազգային ասպարեզ գալուն, Օսմանյան կայսրության բազմազգ կառուցվածքում մեկ անգամ չէ, որ առանձնացրել է հայերին՝ ընդգծելով նրանց քաղաքակրթական բարձր մակարդակը: Տակավին 1878 թ. թերթը գրում էր. «Հայը քաղաքակիրթ և խելացի ժողովուրդ է, որն առաջընթաց է պահանջում և ձգտում դեպի այն, սակայն նրան դրա համար պակասում են հնարավորությունները»²:

¹ Պարբերականը 1875 թ. հիմնադրել են բելրուցի Սալիմ և Բշարա Թաքլա եղբայրները Ալեքսանդրիայում: Առավելապես հայտնի է որպես քաղաքական-պահպանողական ուղղվածության պարբերական, սակայն պատմական որոշակի իրավիճակներում քաղաքական ձկուն կեցվածք է դրսևորել: Նախնական շրջանում ֆրանսամետ էր, ըստ այդմ՝ նաև չեզոք, 1882-ից հանդես էր գալիս ազգայնական, որոշակիորեն օսմանամետ և հակաբրիտանական դիրքերից: «Ալ-Ահրամը» կեցվածքը դիպուկ է գնահատել Մարտին Հարթմանը 1899 թ. Լոնդոնում հրատարակած իր «Եգիպտոսի արաբերեն մամուլը» ուսումնասիրության մեջ՝ որպես «քաղաքական-պահպանողական, որը «լռում էր ֆրանսիական ջրերում», ծառայում եգիպտական ազգայնական գաղափարներին՝ արժանանալով Բրիտանիայի հակակրանքին և ամեն կերպ քծնելով սուլթանին» (տե՛ս Martin Hartmann, *The Arabic Press of Egypt*, London, 1899, p. 10):

² الأهرام، 12.09.1878:

Պարբերականը, հնարավորություններ ասելով, իհարկե, նկատի ունեն Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի (ինչպես և ազգությամբ ոչ թուրքերի) համար մի քանի դար շարունակ ձևավորված և ավելի վատթարացող պայմանները, որոնք ուղղակիորեն հալածանքներ էին:

«Ալ-Ահրամը» ում Շարմ Գաբրիելի հոդվածին է անդրադառնում. հեղինակը, խոսելով հայերի հանդեպ օսմանյան կառավարության ստանձնած պարտավորությունների մասին, ժխտում է Բ. Դոան՝ հայերին կայսրության մնացած ազգությունների հետ քաղաքակրթական մակարդակով, ինչպես և քանակով հավասարեցնելու հավաստիացումները: Նրա կարծիքով, հայերն իրենց գիտակցականությամբ, կրթվածությամբ ու դաստիարակվածությամբ առավել են մյուս համայնքներից, ավելի հմուտ են իրենց կառավարման ձևերում: Հայերին վերագրելով այնպիսի կարևոր հատկանիշներ, որոնք են դիվանագիտության ասպարեզում պահանջվող խելամտությունը և հեռատեսությունը՝ թերթն ընդգծում է. «...այն դերը, որ հայերն ունեն Օսմանյան կայսրության մեջ, ունեն նաև Ռուսաստանում. այդ երկու տերություններում էլ հայերը դիրք և հեղինակություն են վայելում»³:

Եգիպտական պարբերականները Արևմտյան Հայաստանը աշխարհագրական տեսնակյունից բազմաթիվ հրապարակումներում համաժամանակյա կամ հետադարձ հայացքով բնութագրել են որպես Օսմանյան կայսրության տարածքներից լավագույնը:

«Թուրքիայի ճակատագիրն Ասիայում և Եվրոպայում» հոդվածում իսլամական «Ալ-Մուայյադը» (Հաղթական)⁴, որը, ի տարբերություն մնացած պարբերականների, հիմնականում կրոնական կիզակետի միջով էր արծարծում խնդիրները, համաձայնում է այն իրողությանը, որ «Ռոշ քաղաքագետներ Բ. Դոան և նրա տիրույթների ապագան կապում են մեծ տերությունների՝ Արմինիայի հետ կապված ձգտումների հետ, ելնելով նրա աշխարհագրական դիրքի առավելություններից. հայտնի է, որ այն հարուստ է ու բերրի և համարվում է «դրախտ երկրի վրա»⁵:

Նույն ոգով էր առաջնորդվել պարբերականը նաև նախորդող համարներից մեկում տպագրված «Հայաստան» անվանվող երկրի վիճակի մասին» վերտառությամբ հոդվածում, երբ Հայաստանը դնելով Ռուսաստանի կենսական շահերի կիզակետում, նշում էր, որ «այն մի լեռնային կղզյակ է, որը Բոսֆորը նվաճելու ճանապարհին է գտնվում, և Հայաստանը ձեռք բերելով, Ռուսաստանը կստանա Կ. Պոլիսը նվաճելու բանալին: Այդ երկրի կարևորությունը ոչ միայն նրա ռազամավարական նշանակությունը, այլև ամենաբերրի գյուղատնտեսական տարածքը լինելն է»⁶:

³الأهرام، 10.07.1880:

⁴ Եգիպտոսի առաջին իսլամական-ազգայնական պարբերականը հիմնադրել է շեյխ Ալի Յուսուֆը 1889 թվականին:

⁵المؤيد، 22.06.1896:

⁶المؤيد، 1895, 14 նոյեմբերի:

Արևմտյան Հայաստանը և հայերին 1890-ականներին կայսրության հպատակների շարքում առանձնացնում էր նաև երիտթուրքական վտարանդիական պարբերականներից «Ալ-Մուշիրը» (Խորհրդական)՝ պարբերաբար տպագրվող «Հայկական ձգնաժամ» հոդվածաշարում: Աբդուլհամիդյան կոտորածների մասին խոսելիս հեղինակը փաստում է ցավալի իրականությունը. «Մինչ գրվում են այս տողերը, Օսմանյան կայսրության լավագույն մասը՝ Սև ծովից մինչև Միջագետք և բիրիական Արարատի ստորոտից մինչև Փոքր Ասիայի արևմտյան մասերը, որը բնակեցված է պատմություն, սեփական լեզու և հարուստ գրականություն ունեցող մի ժողովրդով, ամայանում է և ավերվում...»⁸: Ապա շարունակում է նկարագրել արևմտահայության ծանրագույն դրությունը, գրելով, որ եկեղեցիները և պաշտամունքի վայրերը հողին են հավասարեցվել, կրոնը ոտնակոխ է արվում, ամենուրեք գերիշխում են բռնությունը և ճնշումները, ջարդերին նորանոր ջարդեր են հաջորդում⁹:

Հոդվածագիրն Արևմտյան Հայաստանի ծանր դրության մեղավոր է համարում Եվրոպային՝ հատկապես Մեծ Բրիտանիային: Նա գրում է. «...սակայն մեծ ուժերը (նկատի ունի եվրոպական մեծ տերությունները - Ն. Ե.), ի տարբերություն Հունաստանի, Սերբիայի, Բուլղարիայի, Հերցեգովինայի, հայերի դեպքում 1878-ին իրենց վարած անբարոյական քաղաքականությամբ խաղից մի կողմ քաշվեցին...»¹⁰:

Հայերի օրհասական վիճակի պատճառը, ըստ հեղինակի, Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածն էր, որը նա անվանում է նրանց վիճակն օրստօրե վատթարացնող մի դեղահաբ: Նա կարծում է, որ թուրք պաշտոնյաները, խախտելով պայմանագիրը, որի տակ սուլթանն իր կնիքն ու ստորագրությունն էր դրել, ավելի են սաստկացրել բռնություններն ու ճնշումները: Անհամար են հայերի՝ առանց դատավարության ձերբակալություններն ու բանտարկությունները, ռազմական ուժերի փնտրտուքը հայկական եկեղեցիներում և այլ վայրերում, որոնք վերածվում են նոր ջարդերի առիթների:

«Ալ-Մուշիրը» չէր սխալվում, ավելին՝ պարբերականի վերաբերմունքը համահունչ էր ժամանակին ուրիշ ականատեսների տված գնահատականներին: Մասնավորապես, Էմիլ Դիլոնը Արևմտյան Հայաստանում Օսմանյան կայսրության վարած քաղաքականությունը բնութագրում էր որպես «կազմակերպված հանցագործությունների, օրինականացված

⁷ «Ալ-Մուշիրը» (Խորհրդական) երկլեզվյա (արաբերեն և անգլերեն) քաղաքական, գրական, քննադատական, երգիծական շաբաթաթերթ էր, որը սկսել էր լույս տեսնել 1894 թ. Ալեքսանդրիայում, ապա տեղափոխվում է Կահիրե՝ Հիմնադիր-խմբագիրն էր Բեյրութցի վտարանդի Սելիմ Սարգիսը, որ երկար դեգերումներից հետո, խուսափելով Կ. Պոլիս մեկնելուց, հանգրվանել էր Կահիրեում:

⁸ "المشير", 8.05.1895:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

սպանությունների և պարզնատրվող անբարոյականության» մի ամբողջ շղթա¹¹, համաձայնելով որոշ քաղաքական գործիչների կարծիքին:

Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակով մտահոգված «Ալ-Ահրամը» արևմտահայերի դրությանն անդրադառնալիս ընդգծում է հատկապես այնտեղ տիրող սովը. «Հայտնի է, թե ինչքան ծանր է վիճակն այդ երկրում (Արևմտյան Հայաստանում – Ն. Ե.), գաղտնիք չեն այնտեղ տիրող սովը և թշվառությունը»¹²: Խմբագրի կարծիքով դա պետք է դրդեր Եվրոպային Օսմանյան կայսրության հետ բանակցելու և պահանջելու հավատարիմ մնալ իր խոստմանը¹³:

Թերթի հաջորդող համարներից մեկում ևս տպագրված է «Սովը Հայաստանում» վերտառությամբ մի հոդված, որտեղ բարձր է գնահատվում բարեգործների՝ հայերին ցուցաբերած օգնությունը: Հասկանալի է, որ գրելով Արևմտյան Հայաստանում տիրող սովի ու թշվառության մասին, որի պատճառով մարդիկ նույնիսկ ինքնասպանության էին դիմում, թերթը եզիպտացիներին ևս գթության կոչ է անում՝ ի նպաստ տառապալներին:

Փաստորեն հիմնվելով թերթի տեղեկատվության վրա, կարելի է հավաստիացնել, որ Եզիպտոսի բնակչությունը ականջալուր էր արևմտահայության վիճակին: Հետագա համարներում չենք հանդիպել այդ կոչին արձագանքելու վերաբերյալ տեղեկատվության, սակայն, ըստ ամենայնի, այն պետք է իր արձագանքը գտներ Եզիպտոսում: Ամեն պարագայում 1890-ականներին արդեն եզիպտահայերի կողմից այդպիսի ֆինանսական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ նյութեր տեղ են գտել եզիպտական մամուլում:

Քրդերին հայերի դեմ հանելու, նրանց և հայերի միջև թշնամանք սերմանելու օսմանյան քաղաքականությունը, որը պաշտոնապես շոշափվել էր Բեռլինի պայմանագրում¹⁴ (նշված փաստաթղթում նախատեսվում էր պաշտպանել հայերին քրդերից, ինչպես նաև չերքեզներից, որն ինքնըստինքյան վկայում էր այդ ազգերի միջև առկա թշնամանքի մասին) և հետագայում դրսևորվեց «համիդիե» կոչվող զնդերի ձևավորումով, ևս արտացոլվել է եզիպտական մամուլի էջերում: Հիմնականում քրդերը համեմատվում են հայերի հետ և հակադրվում նրանց. չի անտեսվում նաև օսմանյան կառավարության՝ հայերին ոչնչացնելու նպատակով քրդերին որպես գործիք օգտագործելու հանգամանքը:

¹¹ Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Диллон Эмиль, Положение дел в турецкой Армении, М., 1896, с. 333.

¹² "الأهرام", 10.07.1880:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ե., 1972, էջ 128:

Այս տեսանկյունից առանձնակի ուշադրության է արժանի հայտնի «Ալ-Մուկթաթաֆ»¹⁵ գիտական պարբերականի գնահատականը: Այս ամսագրում լույս տեսած «Օսմանյան պետության ապագան»¹⁶ հոդվածաշարում հանգամանորեն ներկայացվում էին Օսմանյան կայսրությունը, բնակչությունը և քաղաքական պատմությունը: Հայերին վերաբերող հատվածում հեղինակը գրում է, որ թեև նրանց տարբեր դարաշրջաններում նվաճել են հռոմեացիները, արաբները, թուրքերը (ինչի հետևանքով ցրված են աշխարհի տարբեր մասերում), այնուամենայնիվ, նրանք դեռ համախումբ են Վանի, Սվազի, Էրզրումի, Խարբերդի, Բիթլիսի, Դիարբեքիի նահանգներում, Հալեպի նահանգի մի մասում և Զեյթունում: Նրա կարծիքով օսմանյան կառավարությունը պետք է չանտեսի այն փաստը, որ հայերը առանձնանում են իրենց ազգային նկարագրով Բալկաններում, քանի որ այս դեպքում Ռուսաստանը ստիպված կլինի օգնել հայերին, ինչպես դա արվել էր սերբերի, բուլղարների և հույների պարագայում: Քրդերի առնչությամբ հեղինակը նշում է. «Ինչ վերաբերում է քրդերին՝ մեծամասնությունը քոչվոր է: Նրանք կոչվում և իրենց հոգսերը հոգում են ասպատակության և թալանի միջոցով: Արդուլ Համիդը հայերի կոտորածների ժամանակ նրանց բնակեցրեց և օգտագործեց իր նպատակների համար»¹⁷:

Հոդվածագրի այս տեսակետին համամիտ է նաև «Ալ-Ահրամը», որն «Արմենիա» խորագրի տակ տեղադրել էր Կ. Պոլսի թղթակցի տեղեկատվությունը. «Հայաստանը երբեք իր ներկա վիճակից ավելի վատ վիճակում չի եղել, այդ երկիրը վերածվել է քրդերի բռնությունների ու ասպատակությունների թատերաբեմի»¹⁸: «Ալ-Մուշիրը» ևս հայերին հակադրում է քրդերին՝ նշելով, որ հայերի դեմ կառավարության կիրառած ամենաստոր մեթոդը քրդերի միջոցով նրանց ճնշելն է: Գրելով, որ քրդերը մինչ այժմ չեն կարողացել համախմբվել «Ժողովուրդ» կոչվելու համար, հեղինակն ընդգծում է, որ նրանց մեծ մասը քոչվորական կենսակերպ է վարում, գրականություն և կրթություն չունի: Իսկ երբ քրդերը ցանկանում են գրավոր մտքեր արտահայտել, ըստ հոդվածագրի, դիմում են հայերեն կամ պարսկերեն այբուբեններին: Ուշագրավ է հեղինակի կողմից Արևմտյան Հայաստանին տրվող բնութագրերը. «Սկզբնական շրջանում քրդերը բնակվում էին Հաքքարում, իսկ հետագայում՝ հատկապես Դրիմի պատերազմից հետո, տարածվեցին հինավուրց, խաղաղ, աշխատասեր և գյուղատնտեսական Հայաստանում (ընդգծումը՝ Ն. Տ.)»¹⁹:

¹⁵ 1884 թ. Կահիրեում սկսեց վերահրատարակվել «Ալ-Մուկթաթաֆ» (Հատրնտիր) գիտական հանդեսը, որը Բեյրութում 1876 թ. հիմնադրել էին Յակուբ Սառուռը, Ֆարիս Նիմրը և Շահին Մակարիուսը:

¹⁶ "المقتطف", 1913, հունիս, էջ 563:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ "الأهرام", 24.06.1880:

¹⁹ "المشير", 15.05.1895:

Տարբեր առիթներով թերթն անդրադարձել է քրդերին, ընդգծել թուրքական կառավարության կողմից նրանց հայերի դեմ հրահրելու փաստը, անպատիժ թալանելու և սպանելու թողություններ նշելով, որ քրդերը սանձարձակ և արտոնյալ են. այնինչ հայերի ցուցմունքները դատարանում հաշվի չեն առնվում, հարկահանների հարստահարությունները շարունակվում են: Ըստ «Ալ-Մուշիրի»՝ քրդերը լավ զինվորներ չեն, բայց զիտեն գողանալ և թալանել: Նշվում է, որ Էրզրումից Բիթլիս և Վանից Սալմաստ ընկած տարածքների բոլոր գյուղերը քրդերը ասպատակել են: «Ալ-Մուշիրը» քրդերին ներկայացնում է թե՛ որպես հայկական հողերի զավթողների՝ թուրք իշխանավորների լուր համաձայնությամբ, թե՛ իբրև թալանողների, ավազակների և մարդասպանների՝ զինված լավագույն զենքերով, որոնց թույլ է տրված անպաշտպան բնակչության դեմ իրականացնել ամեն բռնություն: Հավելում է, որ նրանց սուլթանը երբեք չի պատժում, եթե նույնիսկ մարդասպանություն կամ գողություն կատարելու պահին են բռնվում, մինչդեռ հայերից որևէ մեկի մոտ զենք հայտնաբերելիս անմիջապես ձերբակալում են որպես հեղափոխականի: Կառավարությունը հանիրավի թույլ է տալիս քրդերին ամենուր թալանել և ավերել, իսկ հայերը մահմեդականներին հավասար իրավունքներ չունեն: Երկիրն ավերակի է վերածվել²⁰:

«Ալ-Մուշիրը» Հայաստանի վատթարագույն դրությունը խարան է համարում Եվրոպայի համար, որի պաշտպանությանն է ապավինել կայսրության քրիստոնյա բնակչությունը: Ըստ հոդվածագրի՝ Եվրոպան պարտավոր էր քայլ կատարել և հիշեցնել սուլթանին, որ նա, ըստ պայմանագրի, պարտավորվել է բարեփոխումներ իրականացնել հայկական նահանգներում. տարիներ են անցել, ժամանակ ու հնարավորություն ունենալով՝ նա ոչինչ չի ձեռնարկել²¹:

Բավական տարբեր է իսլամական «Ալ-Մուայյադ» օրաթերթի դիրքորոշումը: Այսպես, «Հայկական հարցի էությունը» հոդվածում ակնհայտորեն ոչ քաջատեղյակ հեղինակը, ցանկանալով ընթերցողին իրազեկել, թե ինչու է այդքան շատ արձարծվում Հայկական հարցը (այս հանգամանքը թույլ է տալիս նշել օրաթերթի կողմից խնդրին տրվող կարևորությունը), փորձում է պատմական ակնարկով անդրադառնալ հայերի անցյալին: Նա գրում է, որ հայերը որպես ժողովուրդ ձևավորվելուց հետո եղել են պարսիկների, բյուզանդացիների, սելջուկների, օսմանցիների իշխանության տակ. այդ պատճառով նրանք այսօր հիշում են իրենց անկախության ժամանակաշրջանը, որը, նրա կարծիքով, ջրհեղեղից հետո էր՝ պարսիկների կողմից նվաճվելուց առաջ: Հեղինակը սխալվում է՝ եզրակացնելով, որ հայերը մշտապես եղել են այլոց իշխանության տակ, և անկախ նրանց պնդումներից,

²⁰ Նույն տեղում:

²¹ Նույն տեղում:

թե իրենք նույնպես հզոր են եղել և իշխել, պատմությունը ժլատ է դա ապացուցող փաստերի խնդրում²²:

Մասնակցներով հայերի ազգային ու սոցիալական ճնշումները՝ Բ. Դուռը գաղտնի հրահանգներ էր ուղարկում հայկական նահանգների տեղի պաշտոնյաներին՝ հայկական ազգային ժողովների գործունեությունը խոչընդոտելու, հայկական դպրոցներում Հայաստանի պատմության դասավանդումը վերացնելու, «Հայաստան» անվանումը գործածությունից հանելու վերաբերյալ: Հրահանգներ էր տրվել նաև խիստ գրաքննություն սահմանել հայկական մամուլի և գրականության վրա:

Բ. Դուռը իր ազդեցության տակ էր վերցրել նաև որոշ արտասահմանյան լրատվամիջոցների: Այս մասին հետաքրքրական տեղեկություն կա «Ալ-Մուկատտամում»:

«Բ. Դուռը և արտասահմանյան թերթերը» հոդվածում, հղելով Թայմսին, նշվում է, որ տպագիր հրատարակությունների վարչության պետին՝ Մյունիք Բեյին, Բ. Դուռը գործուղել է Լոնդոն և Փարիզ՝ իր դեսպաններին հրահանգելու, որ օտար լրատվամիջոցների ձայնը հարկավոր է կտրել՝ հույս ունենալով, որ այդ թերթերը կդադարեն տպագրել խռովություններ և ապստամբություններ հրահրող, անհնազանդություն սերմանող նյութեր²³:

«Ալ-Հիլալը» նույնպես շեշտադրումներ է կատարել օսմանյան քաղաքականության վերոհիշյալ դրսևորումների վրա՝ մասնավորապես անդրադառնալով օսմանյան գրաքննությանը: Ուշագրավ է «Տպագիր հրատարակությունների վերահսկողությունը»²⁴ հոդվածը. պարբերականն անդրադարձել է Օսմանյան կայսրության տպագրության պատմությանը՝ հատկապես շեշտադրելով աբդուլհամիդյան գրաքննության մասը. «Թվում էր սուլթանը մտադիր է կայսրության ողջ մամուլը վերացնել»²⁵: Այս առումով տեղին կլինի հիշել արաբական լրագրության պատմության թերևս ամենանշանավոր հեղինակի՝ Ֆիլիպ դի Տարազիի բնորոշումը, որն Աբդուլ Համիդ Երկրորդին բնութագրել է՝ այսպես վերնագրելով իր աշխատության մեջ տեղադրած նրա պատկերը. «օսմանյան սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդը՝ լրագրության և լրագրողների մեծագույն թշնամին»²⁶:

Ուշագրավ են նաև «Ալ-հիլալի» ներկայացրած հետևյալ մանրամասները գրաքննական արգելքների վերաբերյալ: Գրաքննության կապանքների մեջ մամուլը հրահանգ ուներ տպագրելու լուրեր, որոնք առնչվում էին սուլթանի առողջությանը, պետական գանձարանի ֆինանսական վիճակին, ինչպես և կայսրության տնտեսությանն ու արտադրությանը: Արգելվում էր բառերի և

²² "المؤيد", 23.12.1890:

²³ "المقطم", 17.09.1890:

²⁴ "الهلال", 1916, թիվ 27, էջ 33:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Sht'u. 2. تاريخ الصحافة العربية, الجزء الثاني, ص. 2.

տողերի արանքում շատ տեղ բաց թողնել, քանի որ դա մտածելու տեղիք կտար ընթերցողին՝ նրա միտքը պղտորելով:

Արգելվում էր «Հայաստան» անվանումը պարունակող պատմական կամ աշխարհագրական բնույթի տեղեկատվություն տպագրելը²⁷: Ամսագիրը հավաստում է, որ չնայած լուրեր կային, թե այդ օրենքները կառավարությունը պաշտոնապես չի հրապարակել, սակայն անկասկած է, որ դրանք ուժի մեջ են, քանի որ ամսագրի նկատմամբ դրանք նույնպես կիրառվել են՝ Միրիա կամ կայսրության այլ մասեր համարների առաքման ընթացքում:

Պարբերականն ընդգծում է այն հանգամանքը, որ մաքթուֆջիների (տպագրությունների վերահսկիչների) դեմ գործելը կամ նրանց հետ համագործակցելու ուղիներ փնտրելն անհիմաստ էր: Միննույն ժամանակ անհնար էր նաև կողմնորոշվել արգելվող բառերի հարցում, քանի որ արգելքն ընդգրկում էր ամենատարբեր ոլորտի բառեր, ինչպես թագավորների կամ սուլթանների անուններ կամ նկարներ տպագրելը, այնպիսի գործիքների կամ հասկացությունների անվանումներն օգտագործելը, որոնք կարող էին հեղափոխական մտքեր ներշնչել, ինչպես «վառող», «հրացան», «ազատություն», «անկախություն» և այլն: Արգելված բառերի ցանկը որոշակի չէր, և մաքթուֆջիի կողմից կարող էր ջնջվել մի այնպիսի բառ կամ պատկեր, որի գործածումը միննույն թերթի նախորդ համարում թույլ էր տրվել: Սա վկայում էր գրատպության վերահսկողության սահմանման տարերային բնույթի մասին:

«Ալ-Հիլալը» ավելացնում է, որ չնայած այդ ամենին, նոր օսմանները կարողանում էին իրենց գաղափարները հրապարակել Փարիզում, Եզիպտոսում կամ այլ հեռավոր վայրերում՝ արաբերենով, թուրքերենով կամ ֆրանսերենով, և դրանք ուղարկում էին Օսմանյան կայսրության իրենց համախոհներին՝ արտասահմանյան փոստի կամ իրենց գաղտնի ներկայացուցիչների միջոցով²⁸: 1890-ականներին արդեն «Ալ-Մուքաթթամի» էջերում կարդում ենք. «մարդկանց միտքը չպղտորելու և չհուզելու նպատակով սուլթանը հրամայել է հայերին արգելել աղոթքի ժամանակ քաղաքականությանն առնչվող հայ սրբերի անունների հիշատակումը, այդպիսիք են նրանց որոշ արքաներն և գորավարները»²⁹:

Հայ հոգևորականությունը վերածվել էր օսմանյան կառավարության նշանակետերից մեկը. իրար էին հաջորդում այս կամ այն հոգևորականին

²⁷ 1879 թ. Տպագրական տեսչությունը օսմանյան կառավարության հրամանով արդեն օգտագործում էր «Քուրդիստան» անվանումը «Հայաստանի» փոխարեն՝ անգլիական կառավարության լիակատար համամտության պայմաններում: **Խառատյան Ա.**, Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908), Ե., 1989, էջ 211:

²⁸ "الهلال", նույն տեղում:

²⁹ "المقطم", 13.08.1890, նաև՝ **Գասպարյան Ռ.**, [Գիլիկիա հայության կոտորածը]՝ ներքև և ինքնապաշտպանական մարտերը 1894-1896 թթ., հոդվածների և հրապարակումների ժողովածու, Ե., 2013, էջ 213-237:

պաշտոնից ազատելու կամ քաղաքացիական իրավունքները վերաբերյալ հրամանները: Արևմտյան Հայաստանի տարբեր նահանգներում հայրենասեր հոգևորականներին և մտավորականներին հրահանգներ էին տրվում արգելակելով նրանց գործունեությունը՝ հաճախ անհեթեթ պատրվակներով: Այսպես, 1889 թ. Վանի դեպքերի մասին պատմող մի հոդվածում նշվում է. «Ջնդեր փաշան՝ արդարադատության նախարարը, պահանջել է հայերի պատրիարք Աշրգյանից, որ նրանց հոգևոր առաջնորդ Թադևոսին հեռացնի պաշտոնից՝ համայնքի նկատմամբ իր պարտականությունները իրականացնելու անկարողության պատրվակով»³⁰:

Համիդյան կառավարության քաղաքականության թերևս ամենակարևոր բաղկացուցիչը՝ հայերի քանակի կրճատումը ամենատարբեր եղանակներով, նույնպես չի անտեսել եգիպտական մամուլը:

«Հայկական հարց» խորագրի ներքո Եվրոպայի համար ամենածանր խնդիրը «Ալ-Ահրամը» 1880 թ. մայիսի համարներից մեկում համարում է Հայկական հարցը, որը մեկնաբանում է որպես «Բեռլինի պայմանագրի 61-րդ կետով նշված բարենորոգումների խնդիր այդ երկրում (Արևմտյան Հայաստանում - Ն. Ե.):»³¹: Նշելով, որ բարենորոգումների հարցը երկու մաս է ամփոփում, որոնցից առաջինը վերաբերում է հայերին, իսկ երկրորդը՝ Օսմանյան Թուրքիայի՝ եվրոպական մասի բնակիչներին, թերթը հայերին վերաբերող մասը մեջբերում է գրեթե բառացիորեն. «Բ. Դուռը պարտավորվում է անհապաղ իրականացնել երկրի հայաբնակ մասերի պահանջներից բխող բարեփոխումներ և բարենորոգումներ, ինչպես նաև պաշտպանել նրանց քրդերից և չերքեզներից, իսկ մեծ տերությունները պետք է հետևեն դրա իրականացմանը»³²:

Հուլիսին թերթը տեղեկացնում է, որ օսմանյան կառավարությունը քննարկել է Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու կետերը: Վերապահումով նշելով, որ լուրեր կան, թե կառավարությունը հավանության է արժանացրել այդ ծրագիրը և վավերացրել, «Ալ-Ահրամը» նշում է՝ եվրոպական թերթերից մեկի տեղեկացմամբ՝ սուլթանը հրաժարվել է իրականացնել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը՝ պատճառաբանելով, որ «պայմանագրում մատնացույց արվող վայրերում, որը նախկինում կոչվել է «Հայաստան», հայերը 17 տոկոսից ավելի չեն. այսինքն՝ դա կարելի է համարել անուն՝ առանց անվանյալի»³² (ընդգծումը՝ Ն. Ե.):

Թերթն արդարացիորեն ժխտում է Բ. Դռան կողմից նշվող 17 տոկոսը, այն «կասկածելի» անվանելով, և հավելում է, որ դա ոչ այլ ինչ է, քան պարտավորություններից խուսափելու անհաջող մի պատրվակ: Մեջբերելով այլ աղբյուրներից բերվող տվյալներ՝ հեղինակը եզրակացնում է, որ հայերը կայսրության բնակչության մեկ հինգերորդ մասն են, որը լիովին բավարար է

³⁰ "المقطم", 15.05.1889:

³¹ Նույն տեղում:

³² Նույն տեղում:

այնտեղ բարենո-րոգումներ իրականացնելու համար³³։ Այս դեպքում չի նշվում տվյալների աղբյուրը։

«Ալ-Ահրամի» ստացած նախնական տեղեկատվությունը, որը թերթի բացասական գնահատականին էր արժանացել և բացառվել նրա կողմից, հիմնավորվում էր 1880 թ. հուլիսի 5-ի Աբեդին փաշայի ծանուցագրով։ Խոսքը նրա ներկայացրած հայտնի ծանուցագրի մասին է, որով նա Մեծ Բրիտանիայի դեսպանին հայտնում էր, որ Բ. Դուռը պատրաստ է կատարել որոշակի բարեփոխումներ՝ նշելով, թե «Վանի, Տիարպէքի, Պիթլիսի, Էրզրումի և Սվազի Հայ բնակիչներու պաշտօնական մարդահամարն հետևեալ արդիւնքը տուած է։ Այս վերջիններու թիւը կը բարձրանայ հարիւրն 17-ի, միւս ոչ-մայիման հասարկութեանցը՝ հարիւրին 4-ի, իսկ մայիման բնակիչներունը հարիւրին 79-ի»³⁴։

Ի դեպ, հարկ է նշել, որ հայերին վերաբերող բոլոր վիճակագրական տվյալները վերապահությամբ պետք է ընդունել, քանի որ չափազանց դժվար է սպառնիչ ճշգրտել Օսմանյան կայսրության բնակչության թիվը և դրանում հայերի քանակը։ Հիմնականում փոքր թվեր էին ներկայացվում երկրի ընդհանուր բնակչության վերաբերյալ, որպեսզի համեմատական կարգով կրճատվեր նաև քրիստոնյաների՝ մասնավորապես հայերի թիվը։ Թուրքական իշխանությունները հայերի քանակը ներկայացնելիս դիմում էին նաև այլ խորամանկ քայլերի. ընդհանուր թվեր էին ներկայացնում քրիստոնյաների վերաբերյալ՝ հայերին չառանձնացնելով, կամ հայերի թիվը տրոհում էին ըստ դավանաբանական ճյուղերի։ Հաճախ տրվում էր միայն տղամարդկանց քանակը՝ առանց կանանց և երեխաների։ Բռնի մահմեդականություն ընդունած տասնյակ հազարավոր հայեր ընդհանրապես դուրս էին հանվում հաշվառումներից։ Կարևոր է նաև, որ թուրքական վիճակագրություններում հաշվարկները ներկայացվում էին միայն Արևմտյան Հայաստանի հայերին նկատի ունենալով, և երբեք չեն տրվել դրա սահմանից դուրս՝ գյուղերում և քաղաքներում գտնվող հայերի վերաբերյալ տվյալներ։

Ինչպես երևում է՝ հայերի քանակի վերաբերյալ խնդիրը տարակուսանքի տեղիք է տվել նաև եգիպտական մամուլին։ Դա են վկայում մի շարք հրապարակումներ։ Թեև խնդրին վերաբերող հարցադրումներն առաջ են քաշվել միանգամայն տարբեր բնույթի իրադարձությունների հանրագումարում, դրանց շարժառիթը հաստատապես մեկն է եղել՝ հստակության բացակայությունը։

«Ալ-Ահրամը» հարցի արծարծումը շարունակում է «Բեռլինի կոնգրեսի հետևանքները» հոդվածում՝ գրելով, թե տերությունների դեսպանները շարունակում են ձնշել Բ. Դռանը և պահանջում ենթարկվել Եվրոպայի որոշումներին. «...սակայն խնդիրներ են առաջացել հայերի քանակի հետ կապված, առաջարկվել է նույնիսկ նոր մարդահամար անցկացնել»։

³³ Նույն տեղում։

³⁴ Տե՛ս Լեօ, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 172։

այդուհանդերձ, դա կարող է հետաձգել Բ. Դռան որոշումները»³⁵։ Թերթը չէր սխալվում եզրահանգում կատարելիս, քանի որ արդեն իսկ խնդրի լուծման ձգձգումը և խուսանավելը վերածվել էին Բ. Դռան հիմնական քաղաքական գործելակերպի։ Իսկ Աբեղին փաշայի ծանուցագրին պատասխանելով՝ եվրոպական վեց տերությունների դեսպանները իրենց հավաքական ծանուցագրում ևս կասկած էին հայտնում ներկայացված թվաքանակի վերաբերյալ և ակնկալում «61-րդ յոդուածոյն նշանակած նահանգաց մէջ բնակուող մամէտականաց և քրիստոնէից մերձաւորագոյն թիւը՝ որչափ կարելի է փութով՝ առնել տալ անկողմնակալ մասնախմբի մը ձեռք»³⁶։ Հայերի քանակին առնչվող տեղեկություններ կան նաև «Ալ-Մուայյադ» օրաթերթի էջերում, որոնք, սակայն, նույնպես հիմնված են օսմանյան պաշտոնական վիճակագրական տվյալների վրա։ Հեղինակն ըստ նահանգների ներկայացնում է հայերի թիվը Օսմանյան կայսրությունում՝ դիտարկելով մահմեդականների հետ տոկոսային հարաբերակցության մեջ։ Ըստ հաշվարկների՝ հայերը ողջ բնակչության 15 տոկոսն էին կազմում։ Թերթը նշում է, որ հաշվի չեն առնված այլ համայնքները (հավանաբար նկատի ունի կրոնական համայնքները), որոնք կազմում էին բնակչության հինգ տոկոսը։ Հայերի մեծամասնությունը, ըստ թերթի, բնակվում էր Բիթլիսում, որտեղ նրանց հարաբերակցությունը 36 տոկոս էր։ Հակառակ այս տվյալների՝ ժամանակի ինչպես հայկական, այնպես էլ օտար բազում սկզբնաղբյուրների տվյալները միանգամայն այլ պատկեր են վերհանում՝ հայ ազգաբնակչության առավել մեծ թվաքանակներ նշելով։

Թերթը մեկ այլ հոդվածում նույնպես համաձայնում է Բ. Դռան պաշտոնյաների կարծիքի հետ՝ հիմնվելով թղթակցի հարցազրույցի տվյալների վրա։ Արդեն Մայիսյան բարենորոգումների ծրագիրը (1895) մեկնաբանելով՝ հոդվածագիրը ժխտողական վերաբերմունք է արտահայտում դրա իրականացման վերաբերյալ՝ կրկին սխալ տվյալներ վկայակոչելով։ Նա փոխանցում է թուրք պաշտոնյաների դժգոհությունն այն մասին, որ հայերը չեն բավարարվում իրականացված բարենորոգումներով և հատուկ իրենց համար նախատեսվող նորանոր արտոնություններ են պահանջում՝ «...չնայած վեց վիլայեթներում նրանց թիվը չի գերազանցում 400 հազարը, իսկ մահմեդականները 4 միլիոնից պակաս չեն»³⁷։ Ակներև է, որ «Ալ-Մուայյադի» տվյալները սխալ են և խիստ նվազեցված։ Դա միանգամայն բացատրելի է, քանի որ հիշյալ տվյալները վերցված են օսմանյան պաշտոնական աղբյուրներից։

Արևմտյան Հայաստանի դրության և արևմտահայերի վերաբերյալ Եգիպտոսի արաբալեզու պարբերականներում կան նաև բազմաթիվ այլ հրապարակումներ, որոնք առանձին ուսումնասիրության կարիք ունեն։ Դա

³⁵ «الأهرام», 1880, սեպտեմբեր։

³⁶ Տե՛ս Լեօ, նշվ. աշխ., էջ 186։

³⁷ «المؤيد», 13.07.1896։

բացատրվում է նրանով, որ ինչպես նշված ժամանակահատվածի համաշխարհային մամուլը, այնպես էլ Եգիպտոսի արաբական պարբերականները լրջորեն հետևել են Արևմտյան Հայաստանում կատարվող իրադարձություններին և ըստ այդմ էլ դրսևորել իրենց սեփական վերաբերմունքը: Այդ հարցում հիմնականում հենվել են համաշխարհային մամուլի էջերում տեղ գտած կամ սեփական թղթակիցների հաղորդած տեղեկատվության վրա: Հրապարակումների բովանդակությունը համադրելով հայկական և օտարալեզու պարբերականներում առկա, ինչպես նաև ժամանակի եվրոպացի, ամերիկացի միսիոներների, քաղաքական գործիչների վկայությունների հետ՝ կարելի է փաստել. Եգիպտոսի առաջատար պարբերականները բարձր են գնահատել հայ ժողովրդին: Հատկա-պես ընդգծվել է նրա քաղաքակրթական բարձր մակարդակը Օսմանյան կայսրության սյուս ժողովուրդների կողքին:

Հրատարակված հոդվածներում արտացոլված են օսմանյան կառավարության հայաջինջ քաղաքականությունը բնորոշող քայլերը: Մասնավորապես՝ դաժան հարկահանությունը, հալածանքները հայ մտավորականների և հոգևորականների նկատմամբ, օսմանահպատակ քրդերի ու հայերի միջև թշնամանք սերմանելու, հայ ժողովրդի քանակը տարբեր մեթոդներով նվազեցնելու միտումները:

Օսմանյան կայսրության կողմից Արևմտյան Հայաստանում և կայսրության հայաբնակ տարածքներում ստեղծված իրավիճակը Եգիպտոսի արաբալեզու պարբերականներն ընկալել և ներկայացրել են առավելապես իրականությանը համահունչ հրապարակումներով: Բացառություն է թերևս իսլամական ուղղվածության «Ալ-Մուսայյադը», որն իր գաղափարական ուղղվածությամբ որոշակի կանխակալ վերաբերմունք ունի կայսրության քրիստոնյա բնակչության նկատմամբ, նաև հայերին առնչվող խնդիրներին:

Արևմտահայությունը և Արևմտյան Հայաստանի դրությունը ոչ միայն ամենօրյա լրահոսի նյութ են հանդիսացել, այլև ներկայացվել են ծանրակշիռ գիտական պարբերականներում: Դրանք ունեն որոշակի տեղ և կարևորություն՝ ժամանակի առաջնային հիմնախնդիրներին նվիրված հոդվածների շարքում: Ըստ այդմ՝ Եգիպտոսի արաբալեզու մամուլը նպաստել է եգիպտական հասարակության ընթերցող շրջանակներին իրազեկելու և համապատասխան հասարակական կարծիք ձևավորելու Արևմտահայաստանի դրության և արևմտահայության խնդիրների վերաբերյալ:

**АРАБОЯЗЫЧНАЯ ПЕРИОДИКА ЕГИПТА О ПОЛОЖЕНИИ
ЗАПАДНЫХ АРМЯН (1878-1896)****ЕРАНОСЯН Н. С.**

Резюме

Арабоязычная периодика Египта отмечала высокий уровень армянской культуры и стратегическую роль Западной Армении в контексте политики великих держав. В этих публикациях освещалась также антиармянская политика османского правительства, в частности, ужесточение налогов, гонения в отношении армянской интеллигенции и духовенства, провокационные действия османских властей, направленные на разжигание розни между османоподданными курдами и армянами. В ряду рассматриваемых периодических изданий особо выделялась газета исламской направленности «Аль-Муайад», отличавшаяся тенденциозностью и предвзятым отношением к христианскому населению Османской империи, в том числе и к армянам.

**ARABIC PERIODICALS IN EGYPT ON THE STATUS OF THE WESTERN
ARMENIANS (1878-1896)****N. YERANOSYAN**

Abstract

Arabic periodicals in Egypt occasionally highlighted the high level of the Armenian culture and the strategic role of Western Armenia in the context of the world powers. The publications covered the anti-Armenian policy of the Ottoman state and government, in particular, tightening tax regulations, the repressions of Armenian intelligentsia and ministry, the provoking measures of the Ottoman state targeted at sowing seeds of discord among Kurds and Armenians, the citizens of the Ottoman state. Al Muhayad newspaper stood out among the periodicals due to its biased attitude towards the Christian population of the Ottoman Empire, including Armenians.